ԾԱՂԻԿ

ՄԱՆԿԱՆՑ

Թիւ 3 | 1889 | ԴԵԿՏԵՄԲԵՐ 1

ՀԻՒԱՆԴ ԱՂՋԻԿԸ

Ի Գըլեայը զինքըն տեսայ մի անգամ,
Սեւերու մէջ թաղուած, տժգոյն եւ նիհար,
Ճակտին վերայ կըրէր մահուան խիստ պատգամ,
Աչերուն մէջ այլ մեծ հոգին վշտահար:

Ձիթենեաց տակ նստած մենիկ կը խորհէր,
Հանդէպ ծովուն՝ ոյր նըմանէր իւր հոգին,
Ուսին վերայ ձգած գլխիկն ոսկեհեր,
Կարծես հրեշտակ մ'էր նա եւ ոչ խորհող կին:

Երեկոյեան ըստուերին մէջ՝ այն աղջիկ
Ինձ երկնային օդերեւոյթ թուեցաւ,
Նէ կը խորհէր, ես լացի լուռ եւ մնչիկ,
Գուշակելով զոր ի սրտին կըրէր ցաւ.

Հէ՛ք որբ աղջիկ, վարդ թառամեալ այգուն մօտ,
Երկնից զաւակ, հոս անծանօթ, անօքիկ,
Մա՛յրն ալ չունէր որ զինքն հոգայր խնամօք,
Եւ ոյր ի ծոց շափոփէին իւր հոգիք,

Պիտի մեռնէ՛ր եւ էր մահուան իւր գիտակ,
Ժամէ ի ժամ մարէր կենաց իւր լոյսեր,
Եւ ինքն հարկաւ ասէր, « Իջնեմ հողոյն տակ,
Գուցէ այն տեղ դադրին իմ ցաւք ու վիշտեր . . . »

« — Ել, քոյր իմ, ել, արեւուն լոյս կը մարի,
Ի՞նչ կը խոկաս, մի տխրիր, մե՛ծ է Աստուած,
Դեռ շատ մատաղ ես, հոգւով վեհ ու բարի,
Ըզքեզ, երկրիս մեր՝ Տէրն ի զուր չէ տուած :

Տե՛ս, ի՛նչ ահեղ յուզին ծովուն զոռ ալիք,
Այլ վաղն անդրէն դառնայ խաղաղ հայելի,
Եւ քու սրտիդ՝ այս օր ցաւոց խաղալիկ՝
Գուցէ վաղիւ փրկարար յոյս կը փայլի :

Զիա՞րդ մեռնիլ կուզես, քո՛յր իմ, ո՛հ, զիա՞րդ,
Գիտեմ հիւանդ ապրիլ ծանր է եւ դժուար,
Այլ ո՞վ ի մէնջ կապրի անհոգ եւ զուարթ,
Մեծ քան զամէն վիշտ՝ մեռնիլն է, ո՛վ թշուառ . . . »

Յանկարծ այն հէքն ելաւ յոտն կանգնեցաւ
Եւ դողալով ըսաւ . « Դու ի՞նչ կը կարծես,
Որբ եւ անօք . սիրտս ու հոգիս մաշեց ցաւ,
Ալ յոյս չունիմ, բայց . . . մեռնիլ չե՛մ ուզեր ես . . . »

*
* *

Վա՜յ քեզ, թշուառ, ի զո՜ւր բարձիր զայդ բողոք,
Ամիս մը վերջ սեւ սեւ հողեր քեզ կերան
Յուղարկաւոր մահուդ գացին չորս հինգ ոք
Եւ մէկ պանդուխտ տէրտէր սեւ երգն ի բերան . . . :

Քաղկեդոն — ԿԱՐԱՊԵՏ Ա. ՈՍԿԵԱՆ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԵԼԻ ԱՐԱՆՑ

Ո-Ա-Ա-Ի

Սատանան՝ Քլէրմոնի Մայր եկեղեցւոյն մէջ եւ փեstրազարդ երգչունին.

(Շար. Նախորդ թիւէն եւ վերջ)

Երգիոնահարն խոնարհութիւն մ՝ըրաւ և երգիոնատեղին ուղղեցաւ։

Եկեղեցին տակաւին խուռն բազմութեամբ լի էր. Եպիսկոպոսն խորանն դարձաւ քահանաներէ շրջապատեալ. հասկցուեցաւ թէ խաղաղութիւն հաստատուած էր, և ամեն ոք սկսաւ աղօթել։ Պատարագն վերսկսաւ։

Ցամրաբար քաղցրալի նուագ մը խունկի պէս տարածուեցաւ շուտով այս քաղաքը ներդաշնակութեան վեհութիւնն բարձրացաւ, Աստուածաշնչի բոլոր շքեղութիւններն, բոլոր տխրութիւններն և բոլոր զգօնութիւններն Աւետարանի սփռուեցան յետագայ ներդաշնակութեանց մէջ։ Հանդիսատեսներն ի գութ շարժելով կուլային։ Եպիսկոպոսին բարեսրտութիւնն յուզած էր երիտասարդ երգիոնահարն, և հոգին այն բոպէին իր բոլոր զգացումներէ ներշնչեալ էր. գերմարդկային նուագ մը կը զարնէր, վասն զի արուեստն մեր զգայութիւնքն կը կրկնապատկէ և կը փոխադրէ զայնս անըստեղծին մէջ։

Այս է ահա բանաստեղծից և նուագածուաց մեծ գործոց իտէալն։

Ցուզեալ ժողովուրդն, եթէ սրբատեղին արգելք չլինէր, պիտի ծափահարէին։ Ուզեցին զայն մեծարել, երկար ատեն հրապարակը կեցան, զայն սպասեցին, բայց այս մեծարանքէն խուսափելու համար եկեղեցւոյն փոքրիկ դռներէն մէկէն դուրս ելած էր։

Արդ միայնակ, գիւղ շտապեց գնալ, վազելով ու ազատ շնչելով զով օդն. բարձունքի մը վրայ կանգ առաւ ուստի քաղաքն կ՝երևէր, և վազեց ուրախալիր։

«Ո՜հ, ազատեցա՛յ, անձիս տէրն եմ։»

Շուտով վերադարձաւ Եպիսկոպոսին այցելելու համար. Եպիսկոպոսն բարութեամբ յանձնեց խոստացեալ նամակներն։ Երեկոյին, շուի պատրաստութիւններն ըրաւ և հետևեալ օրն Փարիզի ճանապարհին վրայ էր։ Ուրախութեամբ կ՝ուղեւորէր. կէս ճանապարհն հետի գնաց, իսկ կէսն ուղեկառքով։

Քիչ դրամ ունէր և շատ յոյս. համեստ էր բնակութիւնն. բայց անծանօթ նորավարժի մը բաւական լաւ էր ժողովրդեան այս մեծ բեմին վրայ։ Գեղեցիկ զգեստ մը չինել տուաւ, և յանդգնութեամբ Եպիսկոպոսին նամակաց հասցէներուն դիմեց։ Այսպէսով մի քանի մեծ տներու մէջ ընդունուեցաւ։ Միոյն մէջ Վոլթէրի պատահելու բարեբաղդութիւնն ունեցաւ։ Անոր առաջ երգեց իր նուագներէն մի քանիներն դաշնամուրի ձայնակցելով, և այնքան սքանչացուց իմաստասէր բանաստեղծն, որ օրերայի մը կտորն յանձնելու խոստումն ըրաւ։ Այն օրէն յետոյ բաղդն իրեն ժպտեցաւ։ Վոլթէր օրինակն տրուած լինելով, նոյն ժամանակի բոլոր բանաստեղծներն ուղեցին օրերաներ գրել երիտասարդ նուագագրին համար։ Անոնցմէ մին՝ որու անունն այնքան մութ է մնացած՝ որքան Վոլթէրի անունն մեծ՝ անոր համար գրեց օրերա-

յի մը քերթուածն թէ արքունեաց եւ թէ ժողովրդեան առջեւ ներկայացուեուելով՝ մեծ յաջողութիւն գտաւ, եւ իսկոյն երիտասարդ նուագածուին եղանակներն այնքան ժողովրդական եղան որք ամեն օր կը կրկնուէին թէ իր յաճախած սրահներուն մէջ և թէ փողոցաց նուագածուներէն։ Քլէրմոնի Տէ Մինիմի փողոցին մէջ. աստղերն գիտելով՝ կ'զգար թէ կը ներշնչուէր, երբ յանկարծ թարմ ու հնչուն ձայն մը, կ'երևէր թէ մօտակայ գեղեցիկ տունէ մը կ'ելլէր, անուանի երգին գլուխաւոր գաղաբարն լսելի ըրաւ. Տխուր պատրաստութիւնք... տժգոյն լապտերք, մեր երազատեսին օրերայի մէջ ամե-

Մատներն սկրբելու վտանգն յանձն առնելով՝ տան նակատն մագլցեց. Եր. 41

խեղճ երգիչոնահարն սկսաւ փառքը վայելել։ Բայց, նորափթիթ ընթերցողք գիտնան թէ՝ փառաց կը հասնուի այնքան աշխատութեամբ, յոգնութեամբ սա վիշտերէ յետոյ, որ, երբ հասած են անոր կիսովին միայն կը վայելեն զայն, այնքան սիրտն վաստակեալ է։

Գիշեր մը, մեծաքայլ կը շրջադայէր նէ աւելի ծափահարեալ հատուածներէն մին։

Իր հանճարին արձագանքէն, որ մենակեցութեան մէջ իսկ զայն հալածած էր, զմայլուն և ողոքեալ, տան դիմացի նստարանին վրայ նստաւ, և քանի իր մեղեդին կ'ունկնդրէր ախորժիւ, աննկուն բաղձանք մը կ'զգար, երգ-

չուհին տեսնել որ իրեն իբր թարգման կը ծառայէր։ Ը՛էր համարձակէր տան դրան զարնել և ծառայները հարցափորձել, վասն զի երկչոտ էր։ Մի այն պատշգամի մը վրայ նայող պատուհան մը լուսաւորեալ էր։ Այն տեղէն կուգար ձայնն։ Հետաքրքրութենէ մղեալ իրր գող բռնուելու և մատներն սկրդելու վտանգն յանձն առնելով՝ տան ճակատն մագլցեց, ցցուած քանդակներուն կառչելով։ Երբ պատշգամն հասաւ, ակնայեռ դիտեց, յառաջանալով գըտնել այն երգչուհին գեղգեղաձայն։ Բան մը չ՛տեսաւ. մի միայն, պատշգամին մի անկիւնէն ոսկեզօծ ու շքեղ վանդակ մը կախուած էր, ուր գեղափետուր ու կանաչ պապկայ մը կը շարժէր։ Ցուսահատ, ձեռներն արիւնալի, զգեստներն պատառեալ, անխոհեմն պիտի իջնէր, երբ իր լսած ձայն հեշտալուր բարձրացաւ լուութեան մէջ և կրկնեց։ Տխո՛ւր պաsrաuսութիւննf... sժգո՛յն լապsերf... ձայնն ոսկեզօծ վանդակէն կ՛ելնէր. երգչուհին կանաչափետուր պապկայն էր։

Տեսածն ու լսածը իրականութիւն էին։ Մեր երկչոտ նուագագիրն սքանչացած, փութապէս իջաւ և տան դուռը զարկաւ։ Պահ մը յետոյ, մանկամարդ ու շքեղազարդ կոմսուհւոյ մը ներկայեալ, կ՛աղաչէր որ պապկայն իրեն ծախեն։

« Բայց կը պաշտեմ զայն, պատասխանեց կոմսուհին, խնդալով։

— Ի՛նչ, տիկին, որ և իցէ գումարով չ՛է՞ք կրնար ծախել զայն։

— Դրամի՛ և ոչ որ և իցէ գնով... բայց պիտի կարենայի փոխարինել։

— Եւ ինչո՞վ, յարեց երիտասարդն անձկութեամբ։

— Իմ պապկային այնքան լաւ երգած եղանակներու երկու մեղեդիներով։

— Նուագի թուղթ ունի՞ք։

— Առէ՛ք, ըսաւ կինն։

Երիտասարդն սեղանի մը քով նըստաւ և առանց վարանման գծեց բազմաթիւ երաժշտական նշաններ, յետոյ ստորագրեց։ Գեղանի կոմսուհին աչերով կը հետեւէր։

— Ի՛նչ, դո՛ւք էք Ռամօ, մեր հըռչակաւոր Ռամո՛։

Եւ ի պատիւ հանճարին խոնարհեցաւ։

Ռամօ, վասն զի նոյն ինքն էր, ներողութիւն կը խնդրէր իւր յանդգնութեան ու ժտութեան համար։

Տիկինն կ՛ուրախանար ծանօթանալուն վրայ սիրելի ու հռչակաւոր երաժըշտին հետ, որ երիտասարդ տարիքի մէջ այնքան հռչակաւոր եղած էր։ Պահ մ՛այսպէս խօսակցեցան, յետոյ տիկինն հրամայեց լծել իւր կառքն, և հոն դընելով պապկայն իւր ոսկեզօծ վանդակով, փոխադրեց զայն Պ. Ռամոի բընակարանը։

(Թարգմ.) Մ. ԿՈՍՏԱՆԴԵԱՆ

ԼԵԶՈՒ ՍՈՐՎԵԼՈՒ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ՄԸ

Երկու անգղիացի ճամբորդներ սըրճարան մը կը մտնեն և սեղանի մ՛առջև կը նստին՝ քիչ մը հեռու նիհար անձէ մը որ լրջօրէն գլանիկ մը ծխելու զբաղած էր։ Հազիւ թէ մեր երկու անգղիացիները գաւաթ մը թէյ խմած էին, և ահա կ՛սկսին նշանաւոր թղուկի մը վրայ խօսիլ։

« Քիչ օրէն պիտի գայ, կ՛ըսէ Անգղիացիներէն մին։

Առ այս, դիմացը նստող լրջադէմ

օտարականը բերանը բանալով, անգլիերէն լեզուաւ կ'սկսի խօսիլ.

« Կուգամ, կուգաս, կուգայ, կուգանք, կուգաք, կուգան։ »

Անգղիացի ճանապարհորդները, զարմացած, օտարականին մօտենալով.

« Պարո՛ն, ինձ հետ կը խօսի՞ք, կ'ըսէ նմա.

— Կը խօսիմ, կը խօսիս, կը խօսի, կը խօսինք, կը խօսիք, կը խօսին, կը պատասխանէ օտարականը։

— Թողէ՛ք այդ մարդը, կ'ըսէ միւս ճանապարհորդը իւր ընկերին, խենդ է։

— Խենդ եմ, խենդ ես, 'խենդ է, խենդ ենք, խենդ էք, խենդ են։

— Դուրս ելէ՛ք, կը գոչէ Անգղիացի ճանապարհորդը, կատղած և առանց կարենալ լուծելու այս գաղտնիքը։

— Դուրս կ'ելնեմ, դուրս կ'ելնես, դուրս կ'ելնէ, դուրս կ'ելնենք, դուրս կ'ելնէք, դուրս կ'ելնեն, կ'ըսէ յայնժամ օտարականը մի և նոյն անտարբեր դիմօք։

— Հիմա՛ ձեր լեզուն պիտի կտրեմ, կը գոչէ Անգղիացին՝ տեսնելով օտարականին ծաղրական խօսքերն.

— Կը կտրեմ, կը կտրես, կը կտրէ, կը կտրենք, կը կտրէք, կը կտրեն, շարունակեց օտարականը։

Անգղիացի ճանապարհորդներն բոլորովին զարմացած սրճարանէն դուրս կը հանեն այդ տարօրինակ մարդը և մէջերնէն մին անոր կողմը դառնալով.

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, կ'ըսէ։

— Կ'ուզեմ, կ'ուզես, կ'ուզէ...

Յետոյ գերմաներէն

— Գերմաներէն խօսիլ գիտէ՞ք.

— Այո՛։

— Պարոնա՛յք, իմացնեմ ձեզ թէ՝ անգլիերէն կը սորվիմ։ Դասատուս պատուիրած է ինձ իբր օգտակար վարժութիւն, խոնարհելու բայերը։ Այդ պատուէրէն ի վեր որոշեցի ամէն լսած անգղիերէն բայերս խոնարհել։

— Ուրեմն ատո՞ր համար...

— Այո՛, ատոր համար։

Մեր երեք անձերը խնդալով կը մեկնին և կ'երթան մօտակայ ճաշարան մը հոն շարունակելու համար իրենց զըւարճութիւնն։

Թարգմ. Մ. Գ. ՄՕՋԵԱՆ

ՊԱՏԱՀԱՐ ՄԸ ՄԵԾ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Միայնակ կ'երթայի դաշտին մէջէն, ինձ հետ ունենալով նաև ջութակս իւր տուփին մէջ, քանզի նոյն գիշերը, քաղաքի բարեկամներէս միոյն տունը երաժըշտութիւն պիտի ընէինք։ Արդ, ճամբուն դարձուածքին վրայ պատով շըրջապատեալ պարտիզի մը անկիւնը, խորանաձեւ չէնք մը կայ, մեծ տան քով կարծես տնակ մ'է, ուր կուգան կէս օրէն յետոյ անցունել, ճամբուն վրայէն անցորդները դիտելու համար։

Պատուհանը բոլորովին բաց էր, եւ զուարթագին մանկանց խումբ մը իրարու քով սեղմուելով վար կը ծռէին դուրսը տեսնելու համար. փոքրերը առջեւը կայնած էին, մեծերը ետեւը, եւ ցոյց կուտային իրենց կայտառ, թուխ ու խարտեաշ գլուխնին, որք կարծես իրարու վրայ դիզուած էին, ասքա ամէնքն ալ կը շողակրատէին, կը խընդային, երջանիկ էին։

« Պարո՛ն, պարո՛ն, մեզ փոքրիկ եղանակ մը զարկէք ջութակով, գոչեց փոքրիկ ութը տարեկան խորամանկ աղջիկ մը, եւ փախաւ, քաշուելով պատուհանէն, և այսչափ յանդգնութիւն ընելուն համար բոլորովին կասկարմիր և ամօթահար, միւսներու ետին ծած-

կուելով սկսաւ խնդալ. Թուի ինձ թէ մեծ չարութիւն մը ըրած լինել կարծելով։...

Սակայն, երեք չորս տարեկան եղող աղջկունք չարութիւն չի հասկնալով, սկսան իրենց ձեռնիկները իրարու զարնել գոչելով, «Այո՛, այո՛, ջուրթակի եղանակ մը.» յանկարծ կանգ առի և աչերս վեր վերուցի։ Առանց խօսք մը ըսելու, առանց զարմացած կամ բարկացած երևնալու, որպէս բոլորովին բնական բան մը, դէպ ի տղայքն յառաջացայ, տուփը գետինը դրի խոտին վրայ, բացի զայն և ջուրթակս առի մէջէն. յետոյ պատուհանին առջեւ կենալով, ջուրթակը զարնել սկսայ։ Աչխոյժ, եռանդալից և պարելու եռանդ գրգռող եղանակ մը զարկի, որ հակառակ ձեր կամաց, կարծես ցատկել կուտայ ձեզ։

Փոքրիկները, իրենց սարսափէն ուշարբելով, կ'ունկնդրէին, կը ծիծաղէին և կարծես թէ մեծ հաճոյք կ'զգային։ Յետոյ, երբ եղանակը աւարտեցաւ, ուրիշ մը ևս զարկի, սակայն աւելի քաղցրը, աւելի հանդարտ և աւելի յամր, ինչպէս որ մայրիկները կ'երգեն երեկոյին իրենց մանկիկն քնացնելու համար։

Այն ատեն, սիրուններէն մին, — անշուշտ ութ տարեկան կար, — Պատուհանէն հակեցաւ և կրցածին չափ երկարելով իւր փոքրիկ բազուկը, առ իս կարկառեց մի շօթ (բիտէ)։ Կ'երևի թէ ասի իւր նախընթրակն էր, և ուրջ, առանց խնդալու, իւր քաղցր ու մեղմ ձայնով ըսաւ ինձ։

«Պարոն, ձեզ համար է այս։» Գըլխարկս երկարեցի և առի վար թռուցած շօթը։ Կարծեմ թէ քիչ մը խածած էին սակայն բան մը չ'էր։

Նոյն միջոցին, յորում աչերս բարձրացուցի տղայոց հրաժեշտ տալու եւ ժպիտ մ'ուղղելու համար, իրենց սիրունիկ գլխուն վերև, տեսայ մայրիկնուն գլուխը, բոլորովին զարմացած, մի քիչ ամօթահար, և անցածին վրայ բնաւ տեղեկութիւն չ'ունենալով։...

— Ա՜հ, պարո՛ն... Ներեցէք կ'աղաչեմ... տղայք... Սակայն ի՞նչ ըրին ուրեմն։

— Ներողութեան բան մը չ'կայ. երբէք այնքան հաճոյքով նուագ զարկած չունիմ. ոչ ալ քան զայս աղնուագոյն վարձատրութիւն ընդունած ի սրտէ նըւիրեալ։ Մնաք բարով փոքրիկ սիրուն, մնաք բարով տղայք, դուք ևս մնաք բարով, տիկին։»

Եւ ընդ փոյթ մեկնեցայ. քանզի արդէն ուշացած էի, և այսպէս աւարտեցաւ արկածը։

Արդ, կ'ուզէք նաև անշուշտ իմանալ թէ ի՞նչ եղաւ շօթը... հիմա պիտի ըսեմ ձեզ։ Ի սկզբան իյիշատակ այն տըղայոց ուզեցի պահել զայն. յետոյ իւրովի ըսի որ տակաւ առ տակաւ փոչի պիտի լինէր և կորսուէր...։ Ուրեմն, այն երեկոյին սեղանի վրայ դրի զայն իմ առջեւ գեղեցիկ պնակի մը մէջ, և ճաշի ատեն շատ անգամներ նայեցայ անոր, մտածելով այն ազնիւ տղուն վըրայ զոր անշուշտ ոչ ևս պիտի տեսնէի։ Յետոյ, աղանդերի ժամանակ, իրաւոր, լաւ մը կերայ։

Եւ այժմ, շատ հեռի, շատ հեռի մեկնած եմ ես։ Սակայն գրեցի այս պատմութիւնը, տպել տալով այս գեղեցիկ հանդիսին մէջ, յետոյ խրկեցի տղայոց, որպէս զի նոքա ևս իրենց համար երեկոյ մը պատուհանին տակ ջուրթակ զարնող «Պարոնէն» յիշատակ մ'ունենան։

Թարգմ. ի Գաղ. ՄԱՆԻՇԱԿ

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍՍԱՆՔ

Ամեն ոք գիտէ Քոլոմպոսի հաւկիթին պատմութիւնը։ Հանդիսի մը մէջ, երբ մեծանուն ճանապարհորդն կը փառաւորուէր իւր նշանաւոր գիւտին համար, ներկայից մին նախանձելով՝ Ամերիկայի գիւտն կարեւորութեան արժանի դէպք մը չհամարեց։ Ցայնժամ Քոլոմպոս սընակի մը մէջէն հաւկիթ մը առնլով ա, ռաջարկեց հանդիսականաց որ զայն իւր ծայրին վրայ կեցնեն։ Ոչ ոչ կրցաւ յաջողիլ։ Վերջապէս ինք հաւկիթն առնելով և ծայրը սեղանին վրայ զարնելով կրցաւ զայն հաւասարակշիռ պահել։ Այս զուարճալի փորձով ուզեց ապացուցանել թէ՝ Ամերիկայի գիւտն ալ իւր ըրած առաջարկին նման դիւրին է, բայց իրմէ առաջ ո՛չ ոք կրցած էր յըղանալը

Այսօր շնորհիւ գիտութեան, կրնանք հաւկիթ մը իր ծայրին վրայ կեցնել, առանց ծայրի կեղեւը կոտրելու, սա պայմանաւ որ հարկ է զայն շարժել ուժգին կերպիւ, իրար խառնելու համար ճերմկուցն և դեղնուցը, այնպէս որ սոյն վերջինն առաջնոյն տեղը գրաւելով՝ խարսխի պաշտօն կատարէ։

Մեր նկարը կ։ ներկայացնէ խնդրոյն մի նոր տեսակ լուծումը։ Շիշի մը բաց

բերանին կողմնական եզերքին վրայ կը հաստատեն հաւկիթ մը, որ վրայ հարկ է դնել ուղղանկիւն սունկէ խիզ մը, ուսկից երկու կողմանէ կախուած պիտի լինին միևնոյն մեծութեամբ և համաչափ ծանրութեամբ պատառաքաղներ, որք կը ծառայեն հաւկիթը հաւասարակշիռ պահելու և թոյլ չտալու, որ ծանրութեան կեդրոնն խարսխին շրջանակէն դուրս ելնէ։

Մ. Գ. ՄՕՋԵԱՆ

ԲԻԼԱԹ ԼԵՐԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

(ի Զուիցերիա)

Ամէն տարի, հազարաւոր զբօսաշրջիկներ Զուիցերիոյ ամէն կողմը շրջելէն յետոյ կուգան այցելել Լուչէռնա փոքրիկ և սիրուն քաղաքը։ Լճին եզրերէն կը նշմարես Բիլաթ լերան գեղեցիկ ձեւն իւր սրածայր գագաթներով։ Իւր ամենէն մեծ գագաթն է Էյզէլ որ լերան արևմտեան կողմն կը գտնուի և կը պատկէ անոր գլուխը գեղեցիկ և յանկուցիչ եղանակաւ մը։

Մինչեւ ցայսօր, յանդուգն և աներկիւղ ճանապարհորդներն միայն կրցած էին վայելել այդ լեռնական կոթողին ճշմարիտ գեղեցկութիւններն, և միանգամայն անոր գագաթին բարձունքէն նշմարել իրենց ոտից առջեւ պարզուող հմայիչ տեսարանն։ Զբօսաշրջիկներուն թիւը ամէն օր կը բազմանայ։ Երկու Ցիւրիխցի յանդուգն երկրաչափներ, գնդապետ Լաշ և Կիւեէռ-Ֆռէօյլէն ուզեցին լերան կողերուն վրայ հաստատել շղթայաձիգ երկաթուղի մը, որ կարենայ այցելողներն մինչեւ էյզէլի գագաթը հանել։ Այսօր երկու տարուան աշխատութենէ մը վերջ երկաթուղին շինուած է։

Գիծը կը մեկնի Ալպնախ գիւղէն։ Հիմունքը շինուած են սրմերէ և գիծն երկաթէ ու պողպատէ։ Երկու գծերուն մէջտեղ կայ ճանապարհին երկայնութեանը շղթայ մը որ ունի երկու շարքեր կողմնական ակռայներու, որոց մէջ կ'անցնին իւրաքանչիւր կառքին անիւները։ Հոլոր սանձերու միջոցաւ կառախումբը վայրկենաբար կը կանգնի զառի վայրին վրայ։ Վայրաշարժն և կառախումբն, ինչպէս կը յայտնէ պատկերն, կը կազմեն տեսակ մը սանդուղ որոյ հինգ աստիճաններն կը լինին մեքենային յարկը և չորս խցիկներն որոց իւ-



բաքանչիւրն կրնայ ընդունիլ ութ անձ. ուրեմն կառախումբն կը տանի 32 անձ առանց հաշուելու մեքենավարն և հընոցապանն։

Արագութիւնն է մէկ երկվայրկեանի մէջ մէկ մէթր. ամբողջ երկայնութիւնն գծին՝ 4,618 մէթր։ Շինութեան դըժուարութիւնք մեծ եղած են։ Աշխատութիւնն ամառը կը կատարուէր, այդ բարձրութեանց վրայ ձմրան ցրտութիւններն չափազանց սաստիկ լինելուն պատճառաւ։ Միայն գետնուղիներու շինութիւնը կարելի եղաւ յառաջ տանիլ առանց ընդմիջման։ Նմանօրինակ բարձրութեանց վրայ, գործաւորք, բիւրաւոր վտանգներու մէջ աշխատած են, երբեմն իսկ պարաններու միջոցաւ օդին մէջ առկախ մնացած։ Այս երկաթուղւոյն համար երկու միլիոն ֆրանք ծախք եղած է։

Թարգ. Մ. Գ. ՄՕԶԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԶՈՒԱՐՃԱԼԻՒՔ

Վահան և Միհրան երկու եղբայր էին, Վահան միշտ կ'աշխատէր, իսկ Միհրան ծոյլ էր։ Օր մը մայրը կը հարցնէ Միհրանի.

— Տղա՛ս, ինչո՞ւ չես աշխատիր։

— Մայր, եղբայրս միշտ աշխատելով ինձ աշխատելիք գործ չթողուր։

—

Տրդատ 12 տարեկան էր և Արմենակ ութ տարեկան։

Օր մը մայրը տղայոց պտուղ տալով կ'ըսէ. պէտք է որ Տրդատ քու բաժինդ մաս մը եղբօրդ տաս, քանզի նա քենէ փոքր է։ Տրդատ զայս կը կատարէ։

Օր մը մայրը Տրդատին կ'ըսէ.

— Տղաս, հայրդ պատուիրեց որ այս ինչ տեղը երթաս։

— Որովհետեւ, կը պատասխանէ Տրդատ, եղբայրս ինձմէ պզտիկ է, պէտք է որ իմ տեղս նա երթայ։

—

Փոքրիկ Վահէն կ'ըսէ իւր հօրը թէ՝ տարւոյն ամիսներուն անունները գիտէ։

Հայրը կ'ըսէ, համբէ տեսնեմ։

Վահէ կ'սկսի, Յունուար, Փետրուար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Յունիս, Յունուար, Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր։

— Շատ լաւ, բայց Յունիսի տեղ Յունուար ըսիր, որով երկու անգամ կրկնած եղար։

— Ցայնժամ տղեկը կ'ըսէ. Հայր, ես Յունուարը երկու անգամ ըսի, որ երկու անգամ Կաղանդ եկած կ'ըլլայ, որով ես ալ շատ պտուղ և անուշեղէն կ'ուտեմ։

Յ. Մ. ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՀԻՍԻՍԱՑԻՆ ԲԵՒԵՌ

—

ԵՐԿԻՐ ՖՐԱՆՍՈՒԱ ԺՕԶԷՖԻ

ԵՒ

ԾՈՎ ՆՈՐ-ԶԷՄՊԼԱՒ

ԳԼՈՒԽ Բ.

Զմրան Մերձեցումն. — Նոր-Զեմպլա. — Օդոյ Փոփոխութիւններն.

(Շարունակութիւն 2 թիւէն)

Հոկտ. 2ին, 77 աստիճանն անցած էր. մելամաղձիկ մուտք մ'էր ի թագաւորութիւն սառուցեալ։ Ուղեւորք իրենց խուզարկիչ աշխատութիւնը շարունակելու յոյսը կը կորսնցնէին։ Իրենց երջանկութեան միակ վայրկեանն այն պիտի լինէր՝ յորում հանդիպէին

բեւեռային արջերու։ Սոյն կենդանեաց առաջինը սպաննուեցաւ հոկտ. 6ին։ Միսը շուներուն տրուեցաւ, որովհետեւ ճանապարհորդք միս չէին գտներ, եւ թէ այդ միսն պիտի նկատուէր իրենց սննդեան մէկ գլխաւոր մասը։

« Այդ սառնակոյտերուն մէջ, կ'ըսէ Բաեէռ, զէնք գործածելն անհրաժեշտ է նաւէն հեռացողի մը համար։ Հոկտ. 11ին, ես ինքս զգացի այդ պէտքն։

« Նաւէն հեռացած էի, առանձինն և առանց զինուց, սառոյցէ աշտարակի մը շինութիւնը աւարտելու համար։ Ինձ կը հետեւէր Լաբօնացի շուներէս մին, Բէքէլ։ Աշխատութիւնս կ'ստիպէր զիս որ ծռած կենամ. չէի տեսներ ինչ որ կ'անցնէր շուրջս։ Բէքէլ սկսաւ ոռոտկութեամբ հաչել։ Գլուխս վեր բարձրացուցի և քիչ մը հեռուն նշմարեցի արջ մ'որ իմ կողմս կուգար գլուխը թոթուելով և մրմռալով։

« Ցոյս մեծ ուշենալով թէ՝ նաւուն մէջէն մի քանի նաւաստիներ կը տեսնեն ողբալի վիճակս, բաւականացայ միայն բազուկս առ գաւազանն երկնցնել. այս շարժումս ապարդիւն մնաց. սկսայ պոռալ քանի մ'անգամ. « Արջ մը...» վերջապես տեսայ որ նաւաստիք և պաշտօնատարք լսած էին հեծեծագին ճիչերս. այն ատեն տեղի ունեցաւ աղաղակներու և աղմկանց ահաւոր թընդիւն մը՝ ինչ որ խիստ սարսափեցուց կենդանին. որ փոխանակ վրաս յարձակելու, կանգ առաւ և բազմիցս ետին դարձաւ։

« Նոյնօրինակ պատահարաց բարոյականն սա՛ է որ՝ մարդ երբ արջի մ'առջեւ գտնուի կարելի եղածին չափ նաւուն մօտ, միշտ պէտք է որ իւր անձին վրայ վստահի։ »

Թէկէրօֆ անդադար կը յառաջանար դէպ ի հիւսիսակողմն, օրերը կը կարճընային տակաւ առ տակաւ և բեւեռային թռչունք սկսան անյայտանալ։

« Հաղիւ, կ'ըսէ Բաեէռ, աստ ու անդ կը տեսնէինք մի քանի ճայեր, որք մեր շրջակայ ջուրերը կ'այցելէին, կայմի մը ծայրին վրայ կը թռչտէին, և զմեզ դիտելնէն վերջ, սուր ճիչ մը արձակելով նետերու նման կը սլանային դէպ ի հարաւային կողմն։ Կարծես մելամաղձիկ բան մը կար այդ թռչնոց մեկնման մէջ. ամէն արարածներ կը թուէին հեռանալ աղջամղջոց այն ընդարձակածաւալ թագաւորութենէն՝ որ կը բացուէր մեր առջեւ։

Այդ միջոցին, որքան կը յառաջանայինք, այնքան կը հեռանայինք Նոր-Զէմպլայի եզերքներէն։

« Իւր հիւսիսակողման մասին մէջ, այդ մեծ կղզին կը ներկայացնէ քաոսին կատարեալ և ճշգրիտ մի պատկերն։ Դարերէ հետէ անորոշ կերպիւ գծուած են այդ եզերաց պարզ գծերն. միայն մինչեւ Նասոյի հրուանդանն ճըշդութեամբ նշանակուած է, Լիւթք Նաւարկուին շնորհիւ. Պարէնց կղզիներէն սկսեալ, քարտէսներն հակասութեան մէջ են իրականութեան հետ. ուստի փափագեցանք ուղղել սխալներն մեր արշաւանքին միջոցաւ։ Իւր տեսարանն մինչեւ այն պահուն ոչ միայն իւր պարզ դեղեցկութեամբն հրճուեցուցած էր մեր աչերն, այլ և մեզ համար մնացած էր, մեր ճանապարհորդութեան միջոցին, իրր խորհրդանշանն կայուն և անշարժ աշխարհի մը մէջ։

« Ափսո՛ս, տակաւ առ տակաւ այդ պատկերը ջնջուեցան։ Մեր տքնութիւններն հոկտեմբերի մէջ աճեցաւ։ Նոյն ամսոյ 12ին, բարձրութեան գիծ մը միայն կը նշմարէինք հարաւակողմէ հիշդ

48 քիլոմէթր հեռի։ Ահաւոր միայնութիւն մը շրջապատեց զմեզ, եւ յառաջացանք անկարող հասկնալու թէ ո՞րչափ ժամանակ պիտի մնայինք այդ ամայի և մթին վայրերու մէջ։»

Աշունն հասած էր. օրերն կարճեցան և ոչինչ կը շարժէր նաւուն շուրջը, որ կը շարունակէր իւր ընթացքն դէպ ի հիւսիսային արևելեան կողմն։ Եւ սակայն սառնամանեաց կուտակումն և ճարճատիւնը ենթադրել կուտային թէ՝ այդ խաղաղութիւնը վաղանցուկ էր։

Երեկոյ մը, արդարեւ, սենեակներէն տեսան որ կանդեղք կը ցոլանային սառոյցին մակերեսին վրայ, այն ատեն հասկցան թէ՝ սառուցապատ դաշտի մը վրայ կը գտնուէին։

Հետևեալ օրն հոկտ 13 էր։ Այդ զարմանալի թիւն ամէն մարքեր խորապէս յուզեց. արշաւանքին պատրաստութիւնները տեսնող մասնախուզմը փետ. 13ին կազմակերպուած էր. նաւն 13 ապրիլի ծով իջած էր Պրէմէրհաֆէն, եւ յունիս 13ին մեկնած էր, վերջապէս իր նաւարկութեան 13րդ օրը սառոյցներուն հանդիպած էր. ի լրումն աղետից, ջերմաչափն զերոյէն վար 13 աստիճան կը նշանակէր։

Հոկտ. 13ին, նախաճաշի ժամանակ, սառոյցն երկուքի բաժնուեցաւ, ամէն ոք կամուրջը վազեց։ Թէկէրօֆ ճնշմամբ պաշարուած էր. ղէկն, աւելի հակամէտ բաղման, կը հեծեծէր։

«Ամէն մարդկային ընդդիմութիւն անկարելի էր, կ'ըսէ Բաեէռ, և սակայն սրտայոյզ էր տեսնել այդ մարդիկն որք իրենց ընկերներէն օգնութիւն կ'սպասէին բնութեան զօրութեանց դէմ դընելու համար։ Կը ցատկէինք սառոյցին վրայ, որոյ աղմուկն օդը ահաւոր մռընչիւններով կը լեցնէր. նման այն սարդերուն՝ որք կը ջանան նորոգել իրենց ոստայնն երբ թշնամի ձեռք մը խլէ նոցա թելերն. մեք ևս կը ջանանք գոցելու զանազան գործիներով սառոյցին վրայ եղած ճեղքերը։ Ա՜խ, բեւեռային ովկիանու մէկ շունչն, մէկ շարժումը կը բաւէ պայթեցնելու բոլոր այդ նորոգութիւնները։

«Տարերայ յեղափոխութիւնն կ'ամբողջանայ. սառոյցի դաշտերն կը փոխուին ահարկու լերանց՝ որք իրարու կը բաղխին դժոխային աղմուկով մը, ճչերու խառնուրդով մը՝ մռնչմանց, սուլմանց և ճարճատմանց աղմուկով մը՝ զոր մարդկային գրիչը չկարէ բացատրել։ Ոմանք, նաւուն կողերուն վրայ յենած ճնշումներ ի գործ կը դնեն, այլք առաջակողմը կը վազեն ուր կը բացուի յանկարծ ջրոյ անդունդ մը։

«Վստահ մօտալուտ կորստեան վրայ մեր տարաբաղդ շոգենաւուն, փութանակի ամէն պատրաստութիւն կը տեսնենք զայն թողելու՝ երբ աղետաբեր վայրկեանն հասնի։ Ի՜նչ անկարագրելի բոպէ։ Ջերմագինս վերջին ակնարկ մը արձակել ամէն իրաց վրայ, համոզուած լինելով թէ՝ ամէն յոյս կորսուած է. ամէն կողմանէ լսել նաւուն խորտակման աղմուկն, սառոյցներուն ինքնին բացուիլն ու գոցուիլը և չկարենալ այս ամենուն դարման մը տանիլ։

Թարգմ. Մ. Գ. ՆՕՉԵԱՆ

(Շարունակելի)

Երբ որ կը տեսնեմք գեղանի մայր մը շրջապատուած սիրուն զաւակներով, կը յիշեմք այն ծառերն որք կը ծաղկին գարնան մէջ, և որոց ծաղիկներն ու պտուղներն ճիւղերուն վրայ են մի եւ նոյն ատեն։

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ԵՒ
ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵՆԱՑ

—

ԳԼՈՒԽ Է.

ՁԻԹԵՆԵԱՑ ԼԵՌ ԿԱՄ Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Շարունակութիւն նախորդ թիւէն

Ս. Համբարձման օրն բոլոր քրիստոնեայք առջի երեկոյէն երթալով իրենց սեփական տեղեաց վրայ վրաններ կը լարեն, տեղւոյն անբաւականութեան պաճառաւ ըստ նախնի սովորութեան իբր հիւրասիրութիւն մենք կը թողունք որ Լատինք իրենց վրանին մին, մեր կողմը լարեն կից մեր երկրորդ վրանին։ Հապէչք կը պատսպարուին Գպտուոց վրանին տակ։

Այս օրն մատրան մէջ ո՛չ մենք և ո՛չ Յոյնք կը պատարագենք, այլ մի միայն Լատին միաբանութիւնը. ուրիշ ազգեր իրենց վրանին տակ կը պատարագեն. բայց վերաբերումն հանդիսաւոր կը լինի. վրանին տակ ուրիշ շարժական սեղանէն առնուելով կը տանին ոտնատեղւոյն վրայ կը դնեն, հոն երիցս կը խնկարկեն և ապա հանդիսաւոր կերպիւ կը բերեն։ Պատարագէն անմիջապէս յետոյ նախ Յոյնք և ապա մենք մատրան դրան առջեւ անդաստան կը կատարենք. որով ժամերգութիւնն լրացաւ կ'ելլայ և ամէն ոք կ'սկսի երթալ։

ՁԻԹԵՆԵԱՑ ԿԱՄ Ս. ՀԱՄԲԱՐՁՍԱՆ ԼԵՌ

Մեր Հայոց միաբանութիւնն, անդ մեր սեփական եղած սպարտիզին մէջ քիչ մը հանգստանալով նախաճաշ կ'ընեն, ապա «Գալիլիա» ուխտի կ'երթան, Աւետարան կը կարդան հոն, և կը վերադառնան ի Ս. Յակոբ. բայց ուխտաւորք կ'սկսին Ս. Համբարձման լերան վրայ և շրջակայքը գտնուած այլ ուխտատեղիքը պտտիլ և ուխտ ընել։

Ս. Համբարձման բակի դռնէն դուրս ելնելով քիչ մը յառաջ հարաւային կողմը պարտիզին մէջ դուռ մը կ'երևի, որուն ներսի կողմն այր մ'է, և սորա մէջ ալ սաորին խուց մը կամ գերեզման մը կայ, ոյն տեղւոյն կ'ըսուի Պեղիբեայ այրը։ Ցիշեալն Անտիոքացի էր և Մարգարիտ անունը կը կրէր, հինգերրորդ դարուն մէջ Եդեսիոյ Նոննոս եպիսկոպոսին ձեռօք դարձի գալով Պեղիքիա անունն առաւ, և եկաւ այս այրին մէջ ապաշխարեց, և կ'ըսուի թէ հոն վախճանեցաւ և թաղուեցաւ։ Մինչև դոց կը պահուի այս տեղս Արաբացւոց կողմէն։

Ասկէ հարաւային ճանապարհն բռնելով մեր դէմը կ'ելնէ մեծ և նոր շէնքի մը պատն, որ արդէն դիմացէն ալ կ'երևի, այս շէնքին դուռը դէպ արևմուտք է, թեև ունի հիւսիսային դուռ մ'ալ, բայց գոց կը պահուի։ Այս տեղն Տէրն մեր Յիսուսի իւր աշակերտաց Տէրունական աղօթքը ուսուցած տեղն է։

Այս ընդարձակ շէնքն այժմ Լատինաց է. 1869 թուականին Լաթուր տ'Օվէռնի իշխանուհին գնելով, առանց հնութեանց ձեռք դպցնելու նորոգեց, եկեղեցի մը չինեց, իւր քովէն ընդ արձակ դետիններ դնելով ընդարձակեց, պարսպեց և մայրապետանոց ըրաւ։ Իւր կենդանութեան, վրան ճիշդ իւր արձանով դերեզմանն պատրաստել տուաւ, որ այժմ կ'երևի։ Շէնքին ներքին կողմը պատերուն վրայ գրել տուաւ, գրեթէ երեսուն տեսակ լեզուներով Տէրունական աղօթքը։ Հոս բնակող մայրապետք մարդոց չ'են երևիր։

Այս շէնքին դրան հարաւային արևմտեան կողմը, իբր 30 մէթր հեռի, Առաքելոց հանգանակը յօրինած տեղը կայ, ուր հին ժամանակ եկեղեցի կար։ Ասկէ բաւական ժամանակ յառաջ 12 խորշեր եւ սոցա մէջ 12 արձաններ գըտնուեցան, որոց համար կ'ըսուի թէ 12 Առաքելոց արձաններն են։ Հրէայք այս տեղի քարերն ծախու առած են, իրենց գերեզմանաց տապանաքար ընելու համար։

Գալիլիա լեռն Ս. Համբարձման տեղւոյն հիւսիսային կողմը կ'իյնայ և իբր 10 վայրկեան հեռի է։ Այս լերան Արաբացիք Քարմ-էլ-Սաիs կը կոչեն։ Աւանդութեամբ կ'ըսուի թէ Կանա-Գալիլիացիք, այս տեղ իջեւան կամ հիւրանոց մ'ունէին, ուր կը բնակէին երբ Ս. Երուսաղէմ կուգային Զատկի տօնի օրեր. և ասկէ մնացած է այս լերան անունը Գալիլիա կոչել։ Տէրն մեր Յիսուս ալ իբր ի Նազարեթէ Գալիլիացւոց համարուած լինելուն երբ Երուսաղէմ կուգար ցերեկները և գիշերները կ'ելներ այս Ձիթենեաց լեռը կ'ադանէր։ Ղուկ. ԻԱ. 37. ԻԲ. 39։ Յովհ. Ը. 12։ Մարկ ԺԳ. 1-3։

Այս Գալիլիա լերան վրայ ևս հին ժամանակ վանք մը և եկեղեցի մը կար, իսկ այժմ մի միայն նոցա տեղը կ'երևի, որուն քովերը հողով լեցուած լինելուն եկեղեցին հորի ձեւ առած է և մէջը ջուր կը լեցուի։

Սոյն լերան գագաթն որոշեալ սահմաններով 1876 թուականին Յոյնք ծախու առած են, և 1886ին ալ շրջապատեցին ամբողջ իրենց սեփական տեղն 5 կանգուն բարձրութեամբ պարսպով մը, այս պարսպին քաշուած ժամանակ Հայք և Լատինք բողոք բարձին, հին եկեղեցւոյ, որ այժմ հոր եղած է ըսինք, տանիսին վրայ եղած երկու սիւներու և սոցա մէջ տեղը եղած մի վէմ քարի համար, որպէս զի պարսպէն դուրս մընայ, որուն ամէն քրիստոնեայ ազգեր իբր իրաւունք հաւասարապէս ուխտի կ'երթան, Աւետարան կը կարդան անդ.

թէև Ցոյնք ի սկզբան պաշտօնապէս խոստացան սիւներն և վէմքարերն բուն իսկ իրենց տեղը ձգելով պարիսպը քաշել և այլ քրիստոնէից իրաւանց չդպչիլ, բայց ի վերջոյ մի փոթորկալի և անձրևոտ գիշեր մը հարիւր գործաւորօք, սոյն երկու սիւներն 65 մէթր դէպ ի հարաւ հեռացնելով պարիսպն քաշեցին և գոցեցին. այս միջոցին վէմքարն ալ անհետացուցին։ Ասոր վրայ Հայք եւ Լատինք և ի մասնաւորի Գպտիք, Ասորիք և Հապէշք խստիւ բողոքեցին որպէս զի վէմքարն գտնուի և սիւներն ալ իրենց տեղ երթալով նախնական վիճակ հաստատուի, սակայն Ցոյնք ընդդիմացան և պնդեցին թէ վէմքար չիկար, և սիւներն ալ իրենց նախկին տեղւոյն վըրայ է, և իրենք ամենևին փոփոխութիւն մը ըրած չ'են. խնդիրն մնաց այսպէս անորոշ։

Գալիլիայէ վերադառնալով կուգանք Ս. Համբարձման գիւղն, որ 60 տնէ կը բաղկանայ, և ինչպէս ըսինք Ջէյթուն կը կոչուի և բնակիչն ալ ամբողջովին Արաբացի են, տուներն *հին, փողոցները նեղ, և ձմեռն ցեխերով լի, ամառը փոշիով։

Գիւղին արևելեան կողմն է Ռուսաց նորաշէն վանքն և եկեղեցին, և նոր զանգակատունն զոր շինեցին 1886ին իբր 50 մէթր բարձրութեամբ։ Վանքին ու եկեղեցւոյն տեղն Ռուսք գնեցին 1868 թուականին Արաբացւոցմէ, եւ 1874ին եկեղեցին ու վանքն շինելու համար հիմնարկութեան սկսած ժամանակնին, նախ այր մը գտան 9 խորշերով որոնք յայտնապէս կը հասկցուին թէ գերեզմաններ են, ամէն միոյն վրայ միւզայիք քարերով զարդարուած է, որոց երեքին կափարիչներուն վրայ գըրուած է նոյնպէս միւզայիքով և հայերէն գրով անուններ. առաջնոյն վրայ ՋՈՋԻԿ, երկրորդին վրայ ՇՈՒՇԱՆ և երրորդին վըրայ ՄԱՐԻՆ։

Մնացեալն յաջորդ թուով

Շարունակելի] ՏՐԴԱՏ ՎՐԴ. ՊԱԼԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆՔ

1. — Ածելւոյն բերանը կը գտնուին սղոցի ակռաներուն նման բազմաթիւ իրարու մօտ ատամներ, ջրոյ տաքութիւնը ընդարձակելով՝ նոցա կտրող մասերն աւելի սուր կ'ընէ։

2. — Որովհետեւ մեր մարմնոյն մէջ գտնուող ջուրը նուազ կը շոգիանայ եւ հետևաբար իւր ծանրութիւնը մարմնոյն ծանրութեան վրայ կ'աւելնայ և այն ատեն մեր մարմինը ծանր կը կշռէ։

3. — Որովհետեւ ձմեռ ժամանակ, մեր թոքերէն դուրս ելնող ջրոյ շոգին կը խտանայ օդին ազդեցութեամբն արտաքինն որ պաղ է և հետևաբար կըրնանք տեսնել զայն։

ՓՈՔՐԻԿ ԹՂԹԱՏԱՐ ԾԱՂԿԻ

Առ Աշնիւ Պարոնայք.

Տ. Զ. յԻւսկիւտար և Հ. Զ. ի Գաղատիա — խորին շնորհակալութիւն ձեր սրտագին բարեմաղթութեանց և շնորհաւորութեանց համար։

Պ. Ս. Ց. ի Մալկարա։ — Ստացանք և յղեցինք թերթերը։ Հրատարակուեցաւ ներկայ թերթի մէջ։ Այժմէն կը յայտնենք մեր խորին շընորհակալութիւնն ձեր ջանից համար, զոր նըւիրել կը խոստանաք։

Ց. Ց. Ա. յՕրտու. — Մեծապէս շնորհակալ ենք։ Մասնաւոր նամակ կ'ընդունիք։

Պ. Ս. Ո. յԱտանա. — Խորին շնորհակալութիւն։ Ձատ նամակ պիտի ստանաք։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ
ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ
ՄԻՔԱՅԷԼ ԷՖ. ԱՃԱՃԵԱՆ
ՀԱՏՈՐ Ա.
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԷՐԵԱՆ
Գին 5 դահեկան։



Լուծումն թիւ 1 Հանելուկի

Տիրան Զրաքեան . — Վահան Հ. Մօստիչեան . — Վահէ Մ. Մամուրեան . — Յովսէփ Հայկազն , Աստիճանաւոր Մ. Գիրք Գ. Գ. Գ. — Գարեգին Մ. Գրբաճեան . — Գ. Գ. Գ. — Գ. Գ. Գ. — Գ. Գ. Գ.